

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ БОГОСЛОВИЯ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF THEOLOGY

ՏԱՐԵԳՒՐՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԺԱ

ЕЖЕГОДНИК

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

ТОМ XI

YEARBOOK

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

VOLUME XI

ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ
ЕРЕВАН - 2016

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2016

YSU PRESS
YEREVAN - 2016

ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Պարզև Բարսեղյան

Խորհրդային Միության փլուզման և Հայաստանի անկախացման հետևանքով շոշափելի փոփոխություններ տեղի ունեցան նաև Հայաստանի կրոնական կյանքում: Ավանդական եկեղեցու աշխուժացմանը զուգահեռ նոր թափ հավաքեցին կամ նոր գործունեություն ծավալեցին մի շարք նորամուտ կրոնական կազմակերպություններ, որոնք Հայաստանի կրոնական ներկայակերպ դարձրեցին բավականին բազմազան ու բազմերանգ: Ոլորտը կարգավորելու անհրաժեշտությունը զգացվեց դեռ 1990-ականների սկզբին, որի արդյունքը հանդիսացավ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» մինչ օրս գործող ՀՀ օրենքը՝ ընդունված Խորհրդային Հայաստանի Գերագույն Խորհրդի կողմից՝ 1991 թ. հունիսի 17-ին¹: Հետագայում ՀՀ Սահմանադրության ընդունումամբ, այլ օրենքների ու իրավական ակտերի ներդրումամբ, ինչպես նաև միջազգային պայմանագրերով ու հռչակագրերով տրվեց ՀՀ-ում կրոնական կազմակերպությունների գործունեության և ազատությունների իրավական կարգավորումը: Այսօր արդեն ՀՀ-ում պաշտոնական գրանցում ունեն և ՀՀ Սահմանադրության և գործող օրենսդրության շրջանակներում գործում են 68 կրոնական կազմակերպություններ²:

Կրոնական այսպիսի բազմազանությունը, անշուշտ, պետք է առաջ բերեր ոլորտին առնչվող բազմաթիվ հիմնախնդիրներ, ոստի կրոնագիտական ուսումնասիրությունը դառնում է խիստ արդիական և կարևոր: Նշված հիմնախնդիրներից մեկն էլ կրոնական հոսանքների կամ կազմակերպությունների տիպաբանությունն է և դասակարգման հիմնահարցը, որն ուսումնասիրվել(ում) է հիմնականում կրոնի սոցիոլոգիայի շրջանակներում: Ժամանակակից համաշխարհային կրոնագիտական ուսումնասիրությունները կրոնական կազմակերպությունների դասակարգման

¹ Տե՛ս «**Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին**» ՀՀ օրենք, http://www.gov.am/u_files/file/kron/Khghcti%20azatutyun.pdf

² Տե՛ս <https://goo.gl/yWiluE>

հարուստ փորձ են կուտակել, որն անշուշտ կարելի է օգտագործել նաև Հայաստանում գործող կրոնական կազմակերպությունների տիպաբանությանը վերաբերող հետազոտություններում:

Կրոնը ոչ միայն տարատեսակ կրոնական գաղափարների, հայացքների և ուսմունքների ամբողջություն է, այլև հանդես է գալիս որպես սոցիալական կազմակերպություն՝ բաղկացած բավականին բարդ կառուցվածք ունեցող հանրային միավորներից և խմբերից: Կրոնական կազմակերպությունը միավորում է մարդկանց ընդհանուր հավատալիքներով և դրանց առնչվող նպատակներով ու խնդիրներով: Այսինքն, «Կրոնական շարժումների և դրանցից ձևավորված կազմակերպությունների հիմքը հավատացյալներն են»¹: Եվ թերևս դա է պատճառը, որ կրոնի սոցիոլոգների կողմից բազմիցս փորձ է արվել տալ առաջին հերթին հավատացյալների դասակարգումը: Դասակարգման առավել հայտնի ձևերից է ֆրանսիացի սոցիոլոգ Գաբրիել Լե Բրայի առաջարկածը, որն արվել է Ֆրանսիայում կաթոլիկ եկեղեցու գործունեության հիման վրա, բայց կարող է տարածվել նաև քրիստոնեական այլ ուղղությունների և դավանանքների վրա: Ժամանակակից հավատացյալներին Լե Բրան բաժանում է չորս խմբի.

- «եկեղեցու համար **«օտար»** (մարդիկ որոնք լիովին հեռացել են եկեղեցուց կամ երբեք դրան չեն պատկանել),
- **«սեզոնային կոնֆորմիստներ»** (եկեղեցի այցելում են հազվադեպ՝ տարիքային (սեզոնային) խորհուրդները՝ մկրտություն, պսակ, հուղարկավորություն, իրականացնելու համար, և ինչպես դիպուկ արտահայտվել է Լե Բրան՝ «նրանք այցելում են եկեղեցի, երբ զանգը իրենց համար է հնչում»,
- **«կանոնավոր հավատացյալներ»** (մասնակցում են կիրակնօրյա պատարագներին, ապաշխարում են և հաղորդություն ստանում Հարության տոնին),
- **«կեղծ բարեպաշտներ»**, կամ **մարտնչող հավատացյալներ** (սրանց կրոնական գործունեությունը դուրս է գալիս կրոնական պատվիրանների պարտադիր նվազագույնի սահմաններից)²:

¹ Религиоведение, Учебное пособие. 2-е изд., / Под ред. М. М. Шахнович/, СПб, 2012, с. 345.

² Նույն տեղում:

- Փաստացի կրոնական համայնք է այսօր համարվում հավատացյալների այն միավորումը, որը հետևում է որոշակի դավանանքի և պատամունքի: Կրոնական համայնքներն էլ իրենց հերթին կարող են միավորվել ավելի մեծ համայնքների կամ միավորումների մեջ՝ ձևավորելով կազմակերպական տեսանկյունից կայուն և ամբողջական որոշակի կառույց (եկեղեցի):

Կրոնական կազմակերպությունների առավել տարածված տիպաբանությունը¹ հանգում է գերմանացի սոցիոլոգ, փիլիսոփա Մ. Վեբերի և պատմաբան Է. Տրյուլչի առաջարկած տարբերակին, որն հետագայում լրացվել է այլ հեղինակների կողմից: Այս տիպաբանության համաձայն կրոնական կազմակերպությունները բաժանվում են երկու ձևի՝ եկեղեցի և աղանդ²:

Մաքս Վեբերը «Տնտեսություն և հասարակություն» աշխատության մեջ, մշակելով եկեղեցու և աղանդի սոցիոլոգիական ըմբռնումները, առանձնացրել է դրանք տարբերակելու երեք նախադրյալներ. 1. վերաբերմունքը «աշխարհի» նկատմամբ, 2. անդամակցության չափանիշները, 3. կազմակերպական կառուցվածքը³: Այսինքն կրոնական կազմակերպությունը «եկեղեցի» է կամ «աղանդ» ըստ «աշխարհի» նկատմամբ վերաբերմունքի և դրանում իր տեղի: Ինչպես նշում է Է. Տրյուլչը. «Եկեղեցին որպես կազմակերպություն հիմնականում պահպանողական է. ակնհայտորեն ընդունում է աշխարհիկ կարգը, կանգնած է զանգվածների մոտ աշխարհակարգի ամրապնդման, գերակայության դիրքերում՝ այդպիսով

¹ Կրոնական համայնքների տիպաբանության մասին մանրամասն տե՛ս **Гараджа В. И.**, Социология религии, М., 2007, с. 215-223:

² Թերևս տեղին է նշել այն կարևոր հանգամանքը, որ համաշխարհային կրոնագիտական ուսումնասիրություններում օգտագործվող լատ. «սեկտա» բառը որպես կանոն հայերեն թարգմանվում է «աղանդ», ինչը սակայն լիովին չի արտահայտում այն իմաստը, որ տվյալ դեպքում օգտագործվում է, քանի որ «աղանդ» բառի այլ իմաստներով գործածությունը հայ իրականության մեջ հայտնի է դեռ վաղ միջնադարից: Ուստի այս թեման դառնում է առանձին քննարկման և ուսումնասիրության առարկա, որին կանդրադառնանք մեր հետագա ուսումնասիրություններում, իսկ մինչ այդ, ըստ ընդունված ձևի, կկիրառենք «աղանդ» բառը:

³ Տե՛ս **Лебедев В. Ю.**, Религиоведение, М., 2013, с. 102:

սկզբունքորեն հանդես գալով որպես ունիվերսալ կազմակերպություն, այսինքն՝ ձգտելով ընդգրկել մարդկային ողջ կյանքը»¹: Եկեղեցին կրոնական կազմակերպություն է, որը չի հակադրվում աշխարհին, ընդունում է նրա մշակույթը, կարգ ու կանոնը, ձգտում է հասարակության առավելագույն քանակի անդամների ներառել սեփական շարքերը: Եկեղեցին «հարաբերականորեն ընդարձակ միավորում է, որին պատկանելությունը, որպես կանոն, որոշվում է ոչ թե անհատի ազատ ընտրությամբ, այլ ավանդությամբ»²: Անդամակցության չափանիշները բավականին համեստ են, չափավոր, ինչն անմիջականորեն կապված է հնարավորինս շատ հավատացյալների ներգրավելու ցանկությամբ, եկեղեցու անդամներն անանուն են, իսկ նրանց ներկայացվող պահանջները՝ համեստ: Փրկությունը հասանելի է միայն եկեղեցու միջնորդությամբ, որի իրավունքները վերապահված են միայն նրան: Եկեղեցին օժտված է նվիրապետությամբ, աստիճանակարգությամբ, ունի հստակ վարչական կառույց: Ժամանակակից կրոնագիտության մեջ հաճախ որպես եկեղեցու հիմնական չափորոշիչներ օգտագործվում են նաև «դավանանքի ընդհանրությունը, որը ենթադրում է հստակ ձևակերպում, կազմակերպական ընդհանրությունը (միասնական ղեկավարություն) և ծիսական ընդհանրությունը (գոնե սկզբունքային պահերով), այսինքն՝ «երեք չափորոշիչների սկզբունքը»³:

Աղանդը ըստ Մ. Վերբերի «վոյունտարիստական միավորում է կրոնական-բարոյական տեսանկյունից արժանավոր (ըստ գաղափարի) մարդկանց՝ որակված որպես այդպիսին և կամավոր մուտք գործած այդ միավորում՝ նույնքան կամավոր նրանց տրված թույլտվության պայմանով՝ նկատի ունենալով նրանց արդեն ապացուցված կրոնական ընտրյալությունը»⁴: Այսինքն աղանդի կարևոր չափանիշ է համարվում անդամության կամավորությունը և ընտրյալությունը (բացառիկությունը): Մ. Վերբերի գործընկեր է. Տրյուչը ներմուծեց եկեղեցին աղանդից տարբերելու նոր

¹ **Трельч Э.**, Церковь и секта / Религия и общество. Хрестоматия по социологии религии. М., 1994, с. 141.

² Основы религиоведения, Учеб. /Под ред. И. Н. Яблокова, М. 2005. с. 77.

³ **Лебедев В. Ю.**, Религиоведение, с. 102.

⁴ **Вебер М.**, Протестантские секты и дух капитализма // Вебер М., Избранные произведения. М., 1990. с. 277.

չափանիշներ. «Աղանդները... հարաբերականորեն ոչ մեծ խմբեր են, որոնք ձգտում են անհատի ներքին կատարելության և իրենց անդամների միջև անմիջական, անհատական կապի: Այդ պատճառով հենց սկզբից դրանք կազմավորվում են ոչ մեծ խմբերով և հրաժարվում աշխարհին տիրելու գաղափարներից. աշխարհի, պետության և հասարակության նկատմամբ իրենց դրսևորում են կամ անտարբեր, հանդուրժող, կամ էլ թշնամաբար տրամադրված, քանի որ նրանք չեն ձգտում վերահսկել դրանք կամ դրանցում ներառվել, ընդհակառակը, խուսափում են դրանցից կամ դրանց իրենց կողքին հանդուրժելուց, և նույնիսկ ձգտում դրանք փոխարինել սեփական միությանը»¹: Ժամանակակից ուսումնասիրողները աղանդը համարում են «կրոնական այս կամ այն ուղղությանը ընդդիմադիր հոսանք»², որը ձգտում է ընտրյալության՝ հակադրվելով աշխարհին: Աղանդին բնորոշ է սեփական ուսմունքի, վարդապետության, դերակատարության, գաղափարական սկզբունքների ու արժեքների բացառիկության ընկալումը: Անդամակցությունը կամավոր է, կարևորվում է ընտրության գիտակցումը, «դարձը»՝ արատավոր, ոչ նորմալ վիճակից դեպի նորմալը: Փրկությունը հասանելի է միայն ինքնակատարելագործմամբ: Դրանով է պայմանավորվում աշխարհի նկատմամբ յուրատեսակ՝ ասկետիկ, ինքնամոլո, խստականոն վերաբերմունքը: Հոգևոր դասը բացակայում է, շեշտադրվում է բոլոր անդամների հավասարությունը, աղանդի ներքին կառուցվածքը կախված է աղանդավորի անձնական որակներից, ղեկավարումը իրականացվում է խարիզմատիկ առաջնորդի կողմից: Աղանդները ճշմարիտ հավատի և գիտելիքների կրող համարում են միայն իրենց: Թերևս պատահական չէ, որ Է. Տրյուչը աղանդը դիտարկում էր որպես *ecclesia in ecclesia* («եկեղեցի եկեղեցու ներսում»)՝³: Պատմականորեն աղանդի ճակատագիրը միատեսակ չէ. «Դրանց մի մասը որոշ ժամանակ անց դադարում է գոյություն ունենալ: Մյուսները ժամանակի ընթացքում վերածվում են այլ ձևերի»⁴:

Ինչպես արդեն նշել ենք, կրոնական կազմակերպությունների դասակարգման Մ. Վեբերի և Է. Տրյուչի մոտեցումները հետագայում լրացվել

¹ **Трельч Э.**, Церковь и секта, с. 141.

² Основы религиоведения, с. 77.

³ Религиоведение, с. 345.

⁴ Նույն տեղում:

են այլ հետազոտողների կողմից: Մասնավորապես, 20-րդ դարի կեսերին ամերիկացի բողոքական աստվածաբան Ռ. Նիբուրը կրոնական կազմակերպությունների շարքին առաջարկեց դասել «դենոմինացիա» (հարանվանություն) հասկացությունը՝ որպես աղանդից դեպի եկեղեցի կրոնական կազմակերպության զարգացման միջանկյալ ձև, իսկ ամերիկացի սոցիոլոգ Հ. Բեքքերն առաջարկեց ժամանակակից նոր կրոնական միավորումների ձևերն անվանել պաշտամունք:

Ըստ Ռ. Նիբուրի՝ կրոնական կազմակերպությունների «... զարգացումը փուլային է և իրականանում է հետևյալ ուրվագծով՝ աղանդ-դենոմինացիա-եկեղեցի-աղանդ և այլն»¹: Դենոմինացիան կրոնական կազմակերպություն է, որին բնութագրական է աշխարհի առջև բաց լինելը և ակտիվ քարոզչական գործունեությունը՝ ուղղված իր այլ անդամներին: Որպես կանոն հետազոտողները, հետևելով Նիբուրին, դենոմինացիան հասկանում են որպես կառուցվածքային առումով ձևավորված կազմակերպություն՝ առանց հստակ ձևակերպված գրավոր վարդապետության: Այն աչքի է ընկնում անդամության խառը ձևով՝ զուգակցելով ավանդական անդամակցությունը և նոր անդամների հավաքագրումը: Եթե եկեղեցին հասարակության մեծամասնությունից պահանջում է նվիրվածություն, ապա դենոմինացիաները մրցում են միմյանց հետ՝ ձգտելով ներգրավել նոր անդամների: Հասարակության և աղանդների միջև առկա են որոշակի լարված հարաբերություններ, այն դեպքում, երբ դենոմինացիաները հասարակության հետ ունեն նորմալ հարաբերություններ: Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, դենոմինացիաները գոյատևելով հարյուրավոր տարիներ՝ կարող են հստակ պահպանել սեփական հատկանիշները, որի պատճով էլ չեն դառնում եկեղեցի: Դենոմինացիաները քիչ թե շատ կարող են ճանաչվել եկեղեցիների կողմից և համագործակցել նրանց հետ:

Կրոնական կազմակերպության «պաշտամունք» (cult) ձևը, որը, ինչպես նշեցինք, առաջ է քաշել Հ. Բեքքերը, նման է աղանդին, սակայն ունի զգալի առանձնահատկություններ: Ըստ Հ. Բեքքերի՝ պաշտամունքը «... սոցիալական կառույցի անձև, անկազմակերպ, ոչ խիտ ձև է»: Պաշտամունքի նպատակը ոչ թե սոցիալական կառույցի պահպանումն է, այլ զուտ անհատական էքստատիկ փորձը, փրկությունը, հարմարավետու-

¹ Лебедев В. Ю., Религиоведение, с. 103.

թյունը և առողջությունը: Այս նպատակը, սակայն, չի միավորում պաշտամունքը, նրա հետևորդները ուղղակի իրենք են ընտրում՝ հավատալ տվյալ ուսմունքին և ապրել տվյալ վարքագծով»¹: Փաստացի պաշտամունքներում հիմնականում ուշադրություն է դարձվում անհատական փորձին, ինչը բերում է միատեսակ հայացքներ ունեցող մարդկանց միավորման: Պաշտամունքի հետևորդներին սովորաբար չի արգելվում այլ կրոնական կազմակերպությունների հետ շփումը կամ չի պարտադրվում որոշակի կարծիք ձևավորել այլ կրոնների մասին: Ինչպես և աղանդի դեպքում է, պաշտամունքները հաճախ ձևավորվում է ոգեշնչող-առաջնորդի շուրջ: Ինչպես նկատել է Բեքքերի քննադատներից Բ. Քեմբըլը, պաշտամունքի Բեքքերի առաջ քաշած բնութագրիչ հատկությունները ունեն բացասական բնույթ և չեն ներկայացնում իրական պաշտամունքը, որը, ըստ նրա, «... խումբ է, որը մի ամբողջություն չէ, մշտական ու կայուն չէ, բացառիկ չէ և չունի հստակ ձևակերպված դանանանք»²: Հետագայում պաշտամունքի հայեցակարգի գիտական ձևակերպումները ձրգտում էին այն հարստացնել դրական բովանդակությամբ՝ հիմքում ունենալով որոշակի բնութագիր: Սկզբում փորձ արվեց պաշտամունքի սահմանումը տալ դավանաբանական ընկալումներով, ըստ որի պաշտամունքը աղանդից տարբերվում է իր օտարածագում աստվածաբանությամբ³: Ուստի սկզբունքորեն հնարավոր է անհատական դարձ պաշտամունքից դեպի աղանդ, սակայն ոչ կազմակերպված փոխակերպում: Սակայն պաշտամունքի այսպիսի բացատրությունը ոչ միշտ է բավարարում կրոնական կազմակերպությունների տիպաբանությանը, որի պատճառով ձևավորվել է նաև պաշտամունքի սահմանման մեկ այլ հայեցակարգ, որը պաշտամունքը դիտարկում է որպես կրոնական միավորման ձև, որը շեղված է կրոնական և աշխարհիկ ավանդություններից⁴: Այսպես, Ջոն

¹ **Becker H.** Systematic Sociology: On the Basis of the «Beziehungslehre» and «Gebildelehre» of Leopold von Wiese. Gary, 1950. P. 624-642.

² **Campbell C.** Clarifying the Cult // The British Journal of Sociology. 1977. Vol. 28. № 3. P. 377.

³ Մանրամասն տե՛ս **Glock C.Y.** and **Stark R.** Religion and Society in Tension. Chicago, 1965:

⁴ **Lofland J.** and **Stark R.** Becoming a world-saver: a theory of conversion to a deviant perspective // American Sociological Review. - 1965. Vol. 30. P. 862-875.

Լոֆլանդը պաշտամունքները ներկայացնում է որպես «փոքր խմբեր», որոնք հեռանում են «ավանդական պատկերացումներից և իրականության, հնարավորության և առաքինության մասին ունեն լրիվ այլ հայացքներ»¹: Հարկ է նշել, որ պաշտամունքի սահմանման նշված մոտեցումները եզակի չեն, և այս հարցում ուսումնասիրողները ներկայացրել են բազմաթիվ այլ տեսակետներ ևս: Մասնավորապես հետաքրքրական է ռուս ժամանակակից կրոնագետ Ե. Բալագուշկինի ներկայացրած պաշտամունքի գործառնական հայեցակարգը, ըստ որի պաշտամունքային ինստիտուտի յուրահատուկ գործառույթը սակրալ կատարելագործումն է², և հենց այս գործառույթն է պաշտամունքը առանձնացնում կրոնական այլ ինստիտուտներից:

Այսպիսով, դիտարկելով կրոնական կազմակերպությունների տիպաբանության համար առաջարկվող ձևերը, կարող ենք փաստել, որ դրանք տարբերվում են մի քանի կողմերով. ինչպիսի՞ն է կազմակերպական կառուցվածքը, ինչպիսի՞ն է վերաբերմունքը աշխարհիկ կյանքի (հասարակության, պետության) հանդեպ, որտե՞ղ և ինչպե՞ս է հասանելի դառնում փրկությունը, ինչպե՞ս կարելի է դառնալ տվյալ համայնքի անդամ: Կրոնական միավորումների ներկայացված ձևերի փոխհարաբերությունները կարող է ներկայացնել հետևյալ ուրվագիծը³.

		Վերաբերմունքը աշխարհիկ իրականությանը	
		Դրական	Բացասական
Փրկության մասին դիրքորոշումը	Բացառիկությունը (extra ecclesiam nulla salus)	<i>Եկեղեցի</i>	<i>Աղանդ</i>
	Բազմակարծություն	<i>Դենոմինացիա</i>	<i>Պաշտամունք</i>
		Բաց	Փակ
		<i>Անդամակցելու սկզբունքը</i>	

Ներկայացված ուրվագիծը, իհարկե, վերջնական չէ և չի արտահայտում կրոնական կազմակերպությունների ողջ տիպաբանությունը, սակայն սա կրոնի սոցիոլոգիայում այսօր ընդունված առավել հայտնի մո-

¹ Lofland J., Doomsday Cult. N.J., 1966. P. 1.

² Մանրամասն տե՛ս **Балагушкин Е. Г.**, Проблемы морфологического анализа религий. М., 2003. С. 97-99.

³ Религиоведение, с. 346.

տեցումներից է և թույլ է տալիս ելակետ դարձնել նաև Հայաստանում կրոնական կազմակերպությունների ուսումնասիրության համար, որին ձեռնամուխ պետք է լինենք հետագա հետազոտական աշխատանքներում:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 15T-6D227 գիտական թեմայի շրջանակներում:

ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Պարգև Բարսեղյան

Բանալի բառեր - կրոնական կազմակերպություն, սոցիոլոգիա, դասակարգում, եկեղեցի, աղանդ, դենոմինացիա, պաշտամունք, հավատացյալ, ուրվագիծ:

Կրոնը ոչ միան տարատեսակ կրոնական գաղափարների, հայացքների և ուսմունքների ամբողջություն է, այլև հանդես է գալիս որպես սոցիալական կազմակերպություն՝ բաղկացած բավականին բարդ կառուցվածք ունեցող հանրային միավորներից և խմբերից: Կրոնական կազմակերպությունը միավորում է մարդկանց ընդհանուր հավատալիքներով և դրանց առնչվող նպատակներով ու խնդիրներով: Կրոնական կազմակերպությունների առավել տարածված տիպաբանությունը Մ. Վեբերի և Է. Տրյոլչի առաջարկած տարբերակն է, ըստ որի կրոնական կազմակերպությունները բաժանվում են երկու ձևի՝ եկեղեցի և աղանդ: Հետագայում այդ ձևերին ավելացվել են նորերը, որոնցից ամենահայտնին դենոմինացիան ու պաշտամունքն են:

КЛАССИФИКАЦИЯ РЕЛИГИОЗНЫХ ОРГАНИЗАЦИЙ

Паргев Барсегян

Ключевые слова - религиозная организация, социология, классификация, церковь, секта, деноминация, культ, верующий, схема.

Религия не только совокупность различных религиозных идей, взглядов и учений, но и выступает в качестве социальной организации, состоящая из социальных групп и общностей, которые обладают сложной структурой. Религиозная организация объединяет людей общими верованиями и связанными с ними целями и задачами. Наиболее распространенная типология религиозных организаций предложили М. Вебер и Э. Трельч, согласно которому религиозные орга-

низации делятся на церковь и секту. Позже добавляются новые, более известные типы - деноминация и культ.

CLASSIFICATION OF RELIGIOUS ORGANIZATIONS

Pargev Barseghyan

Keywords: *religious organization, sociology, classification, church, sect, denomination, cult, believer, schema*

Religion is not only the unity of religious ideas, beliefs and teachings, but also acts as a social organization and consists of public entities and groups having complex structure. Religious organization unites people based on common beliefs and related goals and objectives. The most common typology of religious organizations is the proposed option by M. Weber and E. Tryolch, according to which religious organizations are divided into two forms: church and sect. Later, new forms are added which are denominations and cult.